ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Արարատի մարզի «Վեդի քաղաքի Գագիկ Մարգարյանի անվան №1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հայոց լեզվի և գրականության (22 դասաժամ), ՆԶՊ-ի (զինղեկի) (6 դասաժամ) և կերպարվեստի (9 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՆ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1)
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճեն,
4. Ինքնակենսագրություն (Ձև 5)
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3×4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկը:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 25-ից մինչև հոկտեմբերի 8-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10^{00}-ից 16^{00}-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ սահմանված կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2025թ. հոկտեմբերի 10-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Արարատի մարզի <<Վեդի քաղաքի Գ. Մարգարյանի անվան №1 հիմնական դպրոցում>>, Կոմիտասի 9-ը հասցեում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0234) 2-41-80 հեռախոսահամարով: